

սովորականի հախառակ՝ զգուելի իմն օտարամոլութեամբ՝ յիշատակարան \*) գնել ՝ վերջապէս սր մէկն յիշեմք:

Արգարեւ այսպիսի պարագայից մէջ աւելի մեղադրելի եւ պատասխանատու են եկեղեցական գլխաւոր պաշտօնեայք, որոց յասուկ պարտականութիւն է հրահել եւ միշտ ուսուցանել եւ զգուշացընել զժողովուրդն՝ միանգամայն միութարութեան եւ հրճուանաց արժանի ժողովուրդն է՝ որ նա աւելի նախանձախնդիր է եւ ջերմ աւանդապահ, որոյ ապացոյցները երբեմն կերելին, սակայն դարձեալ չէ կարելի ծածկել եւ չասել ՝ զի երբեմն ժողովուրդն է մեղաւոր՝ որ ինքն կտախպէ կամ անտարբեր կմնայ, որով դարձեալ հաւասար մեղապարտութեան եւ պատասխանատուութեան կենթարկուին առաջի եկեղեցւոյ եւ ընդհանրութեան Ազգի:

Եկեղեցւոյ ամբողջութիւն կկազմուի պաշտօնեայնեբաւ եւ ժողովուրդով ուստի եւ ամբողջութեան պարտքն է միշտ հրահել եւ ջնքել՝ որ եկեղեցւոյ մէջ վեղձմունք մտնէ: Մի ջնչին բանով անգամ եկեղեցւոյ գէմ մեղանչողն՝ միեւնոյն է թէ՛ ամեն բանով եւ համայն եկեղեցւոյ

գէմ կմեղանչէ, եւ եթէ եկեղեցւոյ մի արարողութեան կամ ծիսի եւ կամ սովորութեան գէմ ներելի լինի մեղանչել ինչ ապահովութիւն կայ՝ որ միւսոց գէմ մեղանչելն ներելի պիտի չլինի, եւ եթէ ներելի լինի՝ եկեղեցւոյ եւ Ազգի վիճակն սւր կյանգի թող զի մեղ իրաւունք արուած չէ նախնեաց աւանդութիւնքը զեղծելոյ եւ խանգարելոյ՝ մանաւանդ թէ պարզ պարտաւորութիւն ունիմք ինչ որ ի նախնեաց ընդունածեմք՝ հարազատութեամբ՝ եւ նոյնութեամբ մեր ապագայից յանձնելոյ, եւ մի թէ փանք է մեղ նախնեաց նուիրական եւ համայն աւանդութիւնքը եւն զեղծմանց մատուել, եւ ինչ օգուտ, բայց եթէ հետզհետէ խառնաշփոթութիւններ եւ խանգարումներ յաւելուլ եկեղեցւոյ մէջ, որով միանգամայն մեր պատուական լեզուի, Ազգի եւ եկեղեցւոյ գոյութիւնը սպառնալից վտանգի կմատնուի՝ նոր եւ օտար բաներ ընդունելով՝ օտարին հետեւելով եւ օտար շաւղաց մէջ մոլուելով եւ անհետանալով:

Առ այժմ այսչափ:  
ՎԱՆԻՍԻ ՎԱՐՆԱՊԵՏ ՄԱՆԿՈՒՆԵ,  
ՊԱՏԻՍԹՈՒՆ ԼԱՍՏՉԱՅ, ՈՒՐԱՅՈՂԱՅ,  
ՀԵՐՁՈՒԱՅՈՂԱՅ ԵՒ ԲԱԺԱՆԵՒԱՅ ՅԵԿԵՂԵՅՍՈՅՆ ԼԱՅՈՅ.  
(Ն-Ր-Ն-Ի-Լ-Է-Է)  
30- ԻԵ.

(\*) Եթէ եկեղեցին Հայոց է, եւ երթնեկող ժողովուրդն Հայ է, ինչ կհշանակէ այս օրերս, ի վրայիրս հրատարակուած մի անձի՝ Հայոց նորաշէն մի եկեղեցւոյ վերայ՝ օտար լեզուով եւ տարօրինակ լինին յիշատակարան զրկ տալը, եւ եթէ ստոյգ է, աւելի մեղադրելի եւ պատասխանատու է զայն եկեղեցին օձող Եպիսկոպոսն, որ չպիտի ներէր եւ օձէր՝ մինչև յիշատակարանը Հայերէն լեզուով եւ ըստ նախնական սովորականին նորէն արձանադրել տայր:

Սարգիս հախառակութեամբ կմեղանչէ ՝ և լինի ՝ զամս 4, և թէ ոչ ոք չէր նորա զամս 14:

Մեր Տեանն (1073): — Փիլարատս զօրավոր Յունաց՝ ազգաւ Հայ՝ ապաստելն ի կայսերէ, թ ջնամոցեալ ընդ Գը

րիգորի Ա կայսերի յաղագս արհամարհելոյ թռռնկայ Մամիկոնեան իշխանին Տարօնոյ և Սասնոյ՝ զնա ինքն զՓիլարոսս, զի սա ի ձեռն Աթուղիկոսին կոչեալ էր առ ինքն զԹռռնիկ, ըստ որոյ և նա արհամարհեաց զհրաւեր իւրս Յեա վախճանին թռռնկայ գնացեալ նորա ի Թաւրուր, և ոչ գտեալ անդ զԱթուղիկոսն՝ յետ երկիցս կոչելոյ նորա զՎրիգոր ի Հայրապետական աթոռն՝ իրրև ոչ դարձաւ անդըր Հայրապետն, նորին հաւանութեամբ ժողով արարեալ Փիլարոսս ի Հոնի քաղաք ի Ջահան գաւառի, ձեռնադրել ասյ ի կաթուղիկոսութիւն յաթոռն հայրապետական զՏէր Սարգիս զքեռորդի Պետրոսի Վեառադարձին, հաստատեալ զաթոռն ի նմին քաղաքի ի Հոն: Եւ որ և առաքէ նա ինքն Վրիգոր Աթուղիկոս զՔօղ և զգաւազան Վեառադարձին Պետրոսի:

(1077): — Ելլ Սարգսի չև ևս վարեալ զիշխանութիւն զամս իրր չորս՝ վախճանի անդէն ի Հոն քաղաքի ի գաւառին Ջահանայ:

Սմա յաջորդէ նոյնպէս հակառակաթոռ Աթուղիկոս՝ Տէր Թէոդորոս վահակալ եկեղեցւոյն Հոնոյ ի նմին քաղաքի, որ յաղագս քաջ նուագելոյ զալէլուիայս՝ կոչեցաւ մականուամբ Ելխօսիկ:

(1074): — Յերկրորդում ամի հայրապետութեան Սարգսի՝ Տեղապահ եղաւ Հայրապետական Եթոռոյն յԱնի Տէր Բարսեղ քեռորդի Ա կայսերին՝ ի նմանէ իսկ՝ որդի Ասսակայ որդւոյ Եպիրատայ, յորժամ նա ինքն Ա կայսեր զնաց ի Աստանդնուպօլիս՝ և անախ ի Հոնով:

Պօղոս հակառակաթոռ կաթուղիկոս  
 Ի Մարաշ՝ զամս լէց:

(Եւք Տեառն 1085): — Փիլարոսս զօրավար յիշատակեալն ի նախընթաց զուխրդ, որ կացոյց հակառակաթոռ կաթուղիկոս զՍարգիս քեռորդի Վեառադարձին և զԹէոդորոս Ելխօսիկ ի Հոնի քաղաք, սա յորժամ մազապուրծ փախեաւ յերեսաց Պօլաաճի անուն ամիրայի ի նմին քաղաքէ, և զերծաւ քաղաքն Մարաշ, ուր էին հայք ոչ սակաւ, յորդորեաց Թէոդորոս կաթուղիկոս զԵլխօսիկն զկացուցեալն յիւրմէ ի Հոնի՝ թողուլ զքաղաքն զայն և գալ նստիլ առ ինքն ի Մարաշ: Ելլ ի չառնուլ նորա յանձն զգալն, ածեալ անդր զօրավարին ապստամբելոյ զՊօղոս վարդապետ զվանահայր Ա արագայ՝ ձեռնադրել ետ զնա ի կաթուղիկոս, որով և աթոռ Աթուղիկոսաց Հայոց եղև չորս, սյս ինքն՝ Մեծին Վրիգորի Ա կայսերին ի կողմանս Տորոս լիւրին, Բարսղի քեռորդւոյ նորա՝ յԱնի, Ելխօսիկն Թէոդորոսի՝ ի Հոնի Ջահանայ, և այսր Պօղոսի՝ ի Մարաշ:

Ելլ սոյն սա Տէր Պօղոս անեալ՝ եթէ ի բազմանալ Աթուղիկոսաց ազգին՝ բազմանան ուրեք ուրեք ի նոսա և յուզմունք ինչ և շիտթութիւնք, այր խոնարհ գորով և խաղաղասէր, ոչ բարւոք համարեցաւ կալ ի նմին իշխանութեան, ապա յետ իրր վեց ամսոյ կալոյ յիշխանութեան ի Մարաշ, եթող զիւր կաթուղիկոսութիւն, և դարձաւ վերստին ի վանա իւր՝ և եկաց անդ:

807. ԻԷ.

Վաւելի հաւատարմութեամբ ինքնուրուիս  
 յԱղթամար. որո՞ւմ յաջորդեն և այլ Բիշե  
 անտրոյն զիցայ յայտօր: Գրեցաւ ի իմ  
 (Ամբ Տեառն 1113): — Վաւելի Երբ  
 եպիսկոպոս Աղթամարայ՝ որդի ուրումն  
 թառնկայ՝ լուեալ՝ եթէ ըստ յանձնարար  
 բութեան Վարսղի օծաւ ի Կաթուղեկոս  
 ամենայն Հայոց Վրիգոր Պաշտօնունի  
 եղբայր Շնորհաւոյն ի քսանամեայ հա  
 սակի պատանեկութեան՝ զչարեալ ընդ  
 այս յոյժ, առիթ առեալ զտհասութիւն  
 նորա, տպատամեցաւ ի նմանե և յարոյց  
 զվրդովումն յազգին, և ժողովեալ զհինգ  
 եպիսկոպոսունս ի Զորոյվանս՝ ձեռնադրի  
 ի նոցանէ կաթուղեկոս՝ և նստի յԱղթա  
 մար, ուր և յընդունելութիւն կաթու  
 ղեկոսութեան իւրոյ՝ այս կաշառս ոչ  
 սակաւ այլազգի իշխողի տեղւոյն, և գրէ  
 թուղթս ի զանազան տեղիս ընդունել  
 զինքն կաթուղեկոս Հայոց, և զպարգա  
 միտս ջանացեալ հաւանեցուցանել ըն  
 ծայիւք և աղաչանօք, զպատճառս զայս  
 պիտիս ի մէջ առեալ, թէ աստ ի Աստ  
 պուրական աշխարհէ գերեզման Ասհան  
 Կաթուղեկոսի և այլոց ամանց, թէ աստ է  
 սեղան սրբոյն Վրիգորի, և Քօզ և Պաշ  
 ւազան և Պօտի մաշիկէն նորա, և որ  
 մեծն՝ Աջ նորա սուրբ, և հողաթափ մի  
 Հոսիսիմեայ սրբոյ, և շղարշ կամ դաս  
 տառակ նորաւ Աւթէ՝ աթոռ է Երծ  
 բունի թագաւորաց Հայոց այս տեղի,  
 որովք և հեռեկեցուցանէ՝ տեղւոյն ար  
 ժանի լինել և կաթուղեկոսարան, ընդ որ  
 իշխանաց բազմաց հաւանութիւն ցու

ցեալ և արեւելեայց եպիսկոպոսաց՝ ըն  
 կալան զնա, և բազումք և սանհաւան ընդ  
 այն և հակառակաթոռ և ս զնա համա  
 լեալ մերժեն զնա իբրև զպատամբ ի հա  
 բազատ Աթոռոյն Հայրապետութեան:  
 (1114): — Քայսակիսի գործսն Վաւելի  
 բուեալ Վրիգոր Կաթուղեկոս, արար զայն  
 ժողով մեծ՝ յեպիսկոպոսաց ի վարդապե  
 տաց՝ միանգամայն երկու հազար և աւելի  
 և սանձանց, որպէս զնի ի կարգի ժողո  
 վոց՝ ի հատարն Ա ի Սեաւ լեառն, ուր ա  
 ոաջի եղեալ զարարս Վաւելի յԱղթա  
 մար, բանադրեցին զՎաւելի՝ համաձայն  
 խորհրդով՝ նորովս եղեալ և ի վերայ այ  
 նոցիկ, որք ի ձեռն աշխարհական իշխա  
 նութեան և կաշառանօք ամբարձցին յաս  
 աիճան կաթուղեկոսութեան՝ կամ և  
 պիտիսկոպոսութեան. և յաղագս ամենայնի  
 այսոցիկ գրին յարեւելս առ եպիսկոպոս  
 և իշխանս և առ նոսա իսկ՝ որոց ընկա  
 լեալ էր զՎաւելին կաթուղեկոսութիւն.  
 որք և ըստ բանից ժողովոյն մերժեալ  
 զնա՝ յարեցան ի Վրիգոր:

807. ԻԷ.

Երևորդի հայտ նուազեալ:  
 (Ամբ Տեառն — 1170): Երևորդիք յԵ  
 շատակեալք ի յօդ. Ք և Ժ. Ք՝ կոյին ի  
 ամին ժամանակի՝ որպէս ի նոյն յօգուածան  
 գրի, ի Սամոստիա քաղաքի, և յայլ տե  
 ղիս, որոց ձանաչելով զմորբութիւն իւ  
 բեանց յաւուրս Շնորհաւոյն՝ զիմեն  
 աղաչանօք առ քորեպիսկոպոս քաղաքին  
 թորոս՝ ընդունել զինքեանս ի հաւատս  
 Յմարիաս: Աւ եպիսկոպոսն զբարձից  
 նոցա գրեալ առ Շնորհաւոյն Վերսէս՝ և

ընկալեալ ի նմանէ՝ դամենայն՝ զոր ինչ արժան էր ընդունելոյ ի հաւասար Վր- բիստսոյ՝ մկրտէ զնոսա, որովք և ու- սեալ զարձկոցն զբանս ուղեղ հաւատոյ՝ հաստատեցան ի ճշմարիտ ասածածգի- տութիւնն ըստ որոյ և անհետ եղև սա- կաւ առ սակաւ մոլորութիւն (Արևոր- դեաց):

307. ԻԹ.

Վարսեղ հակառակախոս կախողէրս յԱՆԻ՛ զամս 23:

(Ամք Տեառն 1180): - Յաղագս ժո- դովոյն շնորհակալու որ վասն միարանու- թեան շայոց եկեղեցւոյն ընդ Յունաց յաւուրս Վրիգորի Տղայ կոչեցելոյն, շը- փոթութիւն և աղմուկ ծագեալ ի վա- նականս Սանահնի և գրեթէ յամենայն հոգևորականս մայրաքանիցն շնորհատայ և Չորոգեառացոց, որոց յամենայնի գլուխ գոլով Տուակորգւոյն Վրիգորի՝ ի բաց կացեալ ի Վրիգոր Աթուղեկսէ յա- րեցան յեպիսկոպոսն Անուոյ քաղաքի ի Վարսեղ՝ և յոմանս ի Շիրակացոց, մեաւք ընդ իշխանութեամբ Վարսղի՝ ծանեան զնա շայրապետ իւրեանց, բայց շայք արեւելեան և արեմեան՝ մերժեալ զնոցին զայս անջատութիւն՝ կային ընդ իշխանութեամբ Վրիգորի, ընկալեալք անդիմադարձ գլեծ ժողովն շնորհակա- յու՝ և զբան նորին համաձայն հարազատ դաւանութեան իւրեանց՝ որ յաղագս երկուց բնութեանց անխառն և անշփոթ միաւորութեան ի Վրիստոս, և ոչ միայն ի Աղիկիա, այլ և յամենայն սահմանս շայոց յԱնի, ի Վազլթ, ի Տփլիս:

Սոյն Վարսեղ՝ առաւել ևս զօրացաւ ի վտարանջութեան իւրում՝ ի նպաստից Ապիրամ իշխանի եղբոր իւրոյ՝ յորժամ նանիզակալից եղև արքային Արաց, յոր- մէ հետէ և ինքնիշխան վարէր ի կողմանս Անուոյ՝ շայրապետական ճոխութեամբ:

(1195): - Իսկ յորժամ յեա ժամա- նակաց վախճանեցաւ Վրիգոր Աթուղե- կոս Չորրորդ և ընարեցաւ Վրիգոր Ապի- րատ, կուսակիցք Վարսղի Տուակորգին Վրիգոր և Վաւիթ Վորարեցի և այլ ևս համախոհք սոցին՝ դառնացեալ ընդ կա- թուղեկոսութիւն Ապիրատին, և ոչ ևս կամելով հնազանդել նմին՝ ջանացին ա- մենայն զօրութեամբ կացուցանել կա- թուղեկոս Վարսեղ՝ յիշատակեալն և- պիսկոպոս Անուոյ, այլ չկարացեալ հա- ճեցուցանել ընդ այս զԱ և ոն Արկորդ, բազում բանս չարս զԱմբրոնեցւոյն Աերսիսէ գրեցին առ նա, համարելով զնա ինքն զԱմբրոնեցին արդեառիթ ընտրութեան Վարսղի (1196). ըստ որոց և պառակեացան հեւտեսայինք ոմանք ընդ յիշատակեցոց վանաց առ ժամանակ ինչ՝ և կողան իւրեանց իբրև ստանձին Աթուղեկոս Վարսեղ մինչև ցմահ նորա. բայց ազգն բաց ի Շիրակայնոց՝ և եպիս- կոպոսի նոցին՝ ընդգէմ դառնային նոցա՝ իբրև տպտամիւրց շայրապետական Ա- թուոյն:

Եւ ասոս յընկենտու Ա և ոնի Առաջնոյ արքայի շայոց զՅովհաննէս Աթուղե- կոս շնորհակալու (1203), և ի հաստատելն նորա ի Արս յԱթու Աթուղեկոսութեան՝ զՎաւիթ Արորդ, ի մեծն շայս՝ հաստատեցին զիշխանութիւն Անեցւոյն Վարսղի՝ և կացուցին իւրեանց կաթու-

զիկոս, յորում Ժամանակի և բնակիչք փոքուն է այոց՝ կացուցանելին ինքեանց ՂԱնանիա Աթուղիկոս:

809. 1.

Անանիա Կոնստանդնուպոլսեացի  
Կաթողիկոս:

(Ըմբ Տեառն 1203): — Իբրև վախճան էր Պարթուր Աթուղիկոս Ապիրաան կոչեցեալ՝ ի Սիս, և ընտրութիւն լինէր նոր Աթուղիկոսի, ի հրամանէ արքային Ալեքսանդրի Ա, յերկու կողմն պառակեցան Ժողովեակիսկոպոսաց, կէսք հաճէին յԱնանիա կաթիկոպոս Աբաստիոյ՝ համարեալն յազգականութենէ Վեստադարձին, և կէսք յարքեպիսկոպոսն Սոյ ի Յովհաննէս, յորոց առաւելն երկպառակել՝ Ալեոն արքայ հրամայէ ածել ի Աթուղիկոսութիւն զՅովհաննէս՝ զընտանի համարեալն իւր՝ և սրբելի պալատականաց իւրոց՝ այր փռացի անձամբ:

Աւ յօժանիչն Յովհաննու ի Աթուղիկոսութիւն ըստ հրամանին արքունի իբրև քրթմնջէին կողմնականք Անանիայ ի թէ ոչ համակամութեամբ կաթիկոպոսաց ընտրեցաւ Յովհաննէս՝ այլ միայն ըստ հաճոյս արքային, Անանիա վստահացեալ այսու՝ ձեռներէց լինէր յայն սասիճան, և միաբանութեամբ կաթիկոպոսաց և վանականաց փոքուն է այոց՝ և առաւել ևս բնակչացն Աբաստիոյ հետամուտ եղեալ Աթուղիկոսութեան, և մեծագին ընծայեք առեալ զկամս Առաքնատին մեծ Ամբրային Իսնիոյ, որ իշխէր կողմնց այնոցիկ, նստաւ առանձին Աթուղիկոս ի Աբաստիա, և այս իշխանութիւն յա-

ջողէր նմա ապաքէն ըստ հիմանցս այոցիկ. զի էր աթու թագաւորական Աբաստիա՝ քաղաք Արծրունեաց, և զի Աթու Վեստադարձին Պետրոսի, ուր կայր մարմին նորա: Աւ որպէս ասացաւ ի նախընթաց յօդուածն, յօժանել Վաւթի ի Սիս յաթու կաթուղիկոսական, և յարհամարհել Յովհաննու զհրաման արքայ ի իւր շարժմէս, օժաւ և նա ինքն Անանիա կաթուղիկոս ի Աբաստիա: Ար և շօջէր այնուհետև տիրաբար այցելութեամբ ի թիմս իւր՝ առնելով զգանազան կարգաւորութիւնս, զի ունէր ընդ իւրև ոչ սակաւ կաթիկոպոսս:

(1204): — Ի սմին այցելութեան զնացեալ նորա ի Աբաստիա քաղաք Կապադովկացուց՝ Ժողովուրդն համօրէն ընկալան զնա մեծ պատուով իբրև կաթիկոպոսապետ աղգին, ուր դռեալ նորա և ինտահատակիլ Թէոդորոսի ուրումն որդւոյ առն բարեպաշտի ի էայոց՝ որպէս ի հատորն Պ, ի կարգի նահատակաց էայոց Ակիղեցոյն, առաքէ առ նա զոմն Պէտրոք քահանայ քաջալիբել վնա, որով ուրախացեալ Թէոդորոսի՝ ժամ առ ժամ փափագէր կատարման:

Ի յաճախել յարեւելս ի վարդապետ էայոց բազմադիմի շփոթութեանց ի վերայ Ժողովոյն Սոյ ըստ բանից Օսքարիայ սպասարի՝ և ինչ ինչ ծիսից փոփոխանց՝ (1206) մեռաւ սա ինքն Անանիա առանձին կաթուղիկոս Աբաստիոյ, և բարձաւ երկպառակութիւն Աթուղիկոսական իշխանութեան:

(1206)

809. ԼԱ.

Առաջինըն Առաջինընըն Կախարչի Ե Սե:

(Ըմբ Տեառն 1287):—Յետ վախճանին Յակոբայ Ալայեցւոյ, Ի Ճողովն ընարու- թեան նոր Աթուղիկոսի, յորժամ Լեոն Երբայ Երկրորդ ջանայր կացուցանել իգահ շայրապետական զՎրիգոր Ենա- ւարզեցի, շարք Ճողովոյն հակառակեալ նմին՝ յաղագս պարզամտութեան նորա և յարելոյն Ի շոտմս, միարան հաւանու- թեամբ ընարեն ապա Ի շայրապետութիւն աղբիս՝ զԱստանդին արքեպիսկոպոս Աե- սարիոյ՝ զԱտուկիցին զմականուամբ կո- չեցեալն Պրօնագործ, և յԼազ շարաթու մեծի Չաակին ձեռնադրեցաւ Ի Սիս փա- ւաւոր հանդիսիւ Աթուղիկոս ամենայն շայոց:

Իբրև հասին թուղթք պապին շոով- մայ Աիկողայոսի չորրորդի առ արքայ շե- թում, որ յաջորդեաց Լեոնի, յաղագս միութեան շայոց ընդ եկեղեցւոյն շոով- մայ և գնալոյ զհետ վարդապետութեան Յովհաննու Լատին կրօնաւորի, որ հը- րեշտակութեամբ գնացեալ էր առ փափն Ի զիմաց շեթմոյ, յաղագս այսոցիկ իրա- ցըս՝ ծագեցաւ գժտութիւն Ի մէջ ար- քայի և շայրապետին, և Ի հրամանէ ար- քային լեալ Ճողով Ի վերայ բանիցս, ան- կաւ Աստանդին յԵթոոյ և քսորեցաւ:

(Ըմբ Տեառն 1290):—Ելլ Ի Ճողովն մեծ Ի Սիս յետ վախճանի Ենաւարդեց- ւոյն՝ յաղագս ընարութեան նորոյ Ա- թուղիկոսի՝ և ընդունելոյ զնամակ գաւա- նութեան նորա, զորմէ տես Ի Ճողովս, վերստին կացուցաւ Աթուղիկոս Ի Սիս (1307), ուստի քսորեալ էր զառաջինն,

և յարչուանս անդ Թաթարաց յաշխար- հըն Աիլիկիոյ՝ և այլոց աղբաց (1322)՝ զրէ թուղթ առ պապն շոովմայ հանդերձ արքայիւ Լեոնիւ Ի և պիսկոպոսօք յօդ- նութիւն հասանել հօտին իւրոյ Ի սեր քրիստոնէութեան՝ պատմելով նմա զա- մենայն արկածսն. զի այս հուր՝ որ բորբո- քեցաւ, ասէ, որ քան զօր ծաւալի, և չեք հնար շիջուցանելոյ:

Յետ այսորիկ ոչ հանդուրժեալ նորա այլ ևս առ սաստիկ ցաւոց սրտին՝ յա- զաղս այնչափ աղէտիցն հօտին իւրոյ, զոր տեսանէր առաջն աչաց, վախճանի անդէն յետ վարելոյ զիշնանութիւն Աթուղիկո- սութեան զամս տանն և վեց (1323):

809. ԼԲ.

Պրիգոր Ե. Ենաւարդեցի, Յիսապի Ե Լապինաթի Առաջինընըն:

(Ըմբ Տեառն 1294):—Յորժամ Ստե- փաննոս Աթուղիկոս վաղճանի Ի վտա- րանդութեան յազիպտոս Ի ցաւոց սըը- տին, հաւանութեամբ եպիսկոպոսացն Աիլիկիոյ նստաւ յաթոս շայրապետու- թեան եօթներորդ Պրիգոր Ենաւարդեցի, որ և զառաջինն արժանի համարեալ էր Աթուղիկոսութեան Ի Լեոն արքայէ յետ մահուան Յակոբայ Ալայեցւոյն. սա՛ վանն զի աւերեալ էր շոովմայ Ի նմին ժամանա- կի՝ անտի փոխեաց զԵթոուն Աթուղիկո- սական Ի Սիս, և անտի եցոյց սեր առ Ա- թուղիկոսական աթոսն Եղթամարու, յորմէ հեռէ արարեալ էր խողաղութիւն Ի մէջ երկուց հայրապետական աթոոցն՝ Լեոն արքայ՝ բառնալով Ի նմանէ գնդովսն եղեալս Ի վերայ նորա՝ Ի Ճողովոյն յա-

ւուրս Պաւլոսի՝ վասն ինքնագլուխ վարելոյն անկախ ի մեծ Պաթուղիկոսէն:

Համբաւ Պաթուղիկոսութեան Պրիզորի Անաւարդեաց Տասեալ ի Մեծն Հայս յարեւել՝ եղև պատճառ խոռովութեան վարդապետաց որ անդր, որով և արտունջ ի մէջ նոցա. զի զիտէին զնա հետամուտ ծիսից ազգաց այլոց, որոյ վասն և Հոռոմ մականուանէր. և լուեալ՝ եթէ փոփոխութիւնս կամի առնել եկեղեցական արարողութեանց և այլայլել զինչ ինչ մասունս հաւատոյ, դժկամակութեամբ յոյժ ընդ այն՝ արարին Ժողով ի Միւնիս ինմին ամի՝ զրեալ առ նա թուղթ հանդերձ ստորագրութեամբք մետասան եպիսկոպոսաց և վարդապետաց և քանի մի երևելի իշխանաց, յորում յայտ առնեն զկասկածանս իւրեանց վասն փոխելոյ նորա զԺէսս, և համարելով զայն իբր յեղաշրջումն կրօնից և աւանդութեանց ազգիս, և ազգ առնեն նմա ի բաց կալ յայնպիսի նորաձևութենէ, և մի՛ մուծանել յԱկեղեցի աւելի ինչ կամ պակաս՝ որ ոչ են եղեալ ի հարցն սրբոց. տպա թէ կամիցիս, ասեն, յայնժամ մի՛ աշխատ լինիք և մի՛ զմեզ աշխատ առնէք. ըստ ձեր կամաց լիցի աշխարհք այդ՝ և այլ ոք որ կամիցի, և զմեզ թողէք, ասեն, ի մեր դիտութիւնս. և մեք կացցուք և մնացուք՝ ակնունելով վերին այցելութեանն Խընդրեն ի նմանէ ևս՝ առնել ձեռնարկ հաստատուն և անխախտ կտակաւ միարանութեամբ եպիսկոպոսացն Ալիկիոյ՝ և առաքել առ ինքեանս իբր զյետկար անջնջ, առ ի հնազանդութիւն իւրեանց Հայրապետական Աթոռոյ նորին:

Այլ զի ընդ սոսա էր Ստեփաննոս եպիսկոպոս Միւնեաց Ուռպելեան, և գրիչ թղթոյ Ժողովոյն առ Անաւարդեցին Պրիզոր, և ասելութեամբ ընդ նմա, զրեաց առ նա և ինքն թուղթ առանձին յանդիմանական՝ յազազս վերոյդրեալ հանգամանաց, և ի նոյն միտ զրեաց զգիրք մի՛ ընդդէմ դաւանութեան և աւանդութեան Յունաց՝ կոչեցեալ Չեռնարկ Ստեփաննոսի Միւնեացոյ՝ որպէս տպագրեալն է ի Պոլիս, ընդարձակելով ի նոյն զկարգ բանից թղթոյ նախասացեալ վարդապետաց: Բայց չէ յայանի, եթէ զե՞նչ պատասխանի արար Պաթուղիկոսն Պրիզոր թղթոյ Ժողովոյն: Արևի թէ՛ զնորիս նոցին ոչ ընկալաւ, վասն զի արար զմտազրեալ փոփոխութիւն ի ծէսս և յարարողութիւնս Հայոց եկեղեցւոյն, որպէս ի կարգի բանիցս տեսցի ստորև:

Իբրև զիսաւոր աւագանիք թագաւորութեանն ի թշնամութիւն բերեալք ընդ Հեթմոյ Բ. արքայի ի վերստին յաջորդել նորա յԱթոռն՝ կամէին կորուսանել զնա, և արքայ՝ նոցա զփոխադարձն՝ յետ լսելոյն զդաւաճանութիւնն, Պրիզոր Պաթուղիկոս մտեալ ընդ մէջ՝ հաշտեցոյց զնոսս, և ցուցեալ հաստատութեամբ զհաւատարմութիւնն իշխանացն՝ առնել խաղաղութիւն ի միջի:

Յետ այսորիկ ի խաղաղութեան աշխարհին Ալիկիոյ՝ ժամանակ յաջող ինքեան համարեալ ի վեր հանել զհորհուրդ մտաց իւրոց ի խոփոխութիւն ծիսից և արարողութեանց (1305), զրեաց թուղթ առ երևելի եպիսկոպոսունս արևելեաց վասն այսր իրի, նախ առ արքեպիսկոպոս առնն Միւնեաց՝ Յովհաննէս Որպէլ, որ

մարմնաւոր իշխանութեամբ ևս պայտա-  
 զատեր զաշխարհն, ապա առ Օսքարիա  
 Ծործորեցի՝ արքեպիսկոպոս Արտազու-  
 և առաջնորդ վանաց Թադէոս առաքե-  
 լոյն, և առ մեծ վարդապետն Յովհանն  
 Ծործորեցի ի վանս Ծործորու. զրեաց  
 և առ Յովհաննէս արքեպիսկոպոս Իւրճ-  
 նոյ, և առաջնորդն լերին Աւարաբայ և  
 առ այլս՝ որպէս և առ Աստայի վարդապետ  
 Նչեցի դասասաց վարժապետ արեւելեայց  
 ի կողմանս Արեւանայ՝ ի Վայքի ձոր:

Արոյ վանս Օսքարիա Ծործորեցի և  
 Յովհաննէս Արպել հանդիպելով միմեանց  
 ի Վապրէժ, խորհուրդ արարեալ ի վերայ  
 բանից Աթուղիկոսին հանդերձ վար-  
 դապետք ոմամբք; թէև հաւանեցան  
 խառնել ջուր ի խորհուրդ բաժակին, և  
 կատարել զճնուներն Վրիտանոսի ի 25  
 Վեկաների, այլ հուսկ անկարելի դա-  
 տեալ զփոփոխութիւնսն մուծանել յա-  
 րեւելեան եկեղեցին՝ զրեաց Յովհաննէս  
 արքեպիսկոպոս Արեւնաց Արպել առ Աա-  
 թուղիկոսն, թէ չկարեմք բնաւին հա-  
 ւանեցուցանել զազգն ի նորաձեռութիւ-  
 նն, և եթէ բուռն առնեմք, ծագեացին  
 աղմուկք մեծամեծք:

Այլ մինչ վասն այսպիսի փոփոխմանց  
 ծագեցաւ շփոթութիւն ընդ մէջ Ծոր-  
 ծորեցոյն և Արպելին Յովհաննու և ի  
 տեղիս տեղիս, և հասին ասրաձայնու-  
 թիւնք այլ և այլ վարդապետաց ի կող-  
 մանց կողմանց ի լուր Անաւարդեցոյն,  
 անկանէր ի կասկած՝ երկուցեալ՝ եթէ  
 ի տափանեցի մտադրեալն իւր խորհուրդ,  
 զոր ջանայրն կատարել. սակս որոյ և զը-  
 լեալ նորա թուղթ յորդորանաց առ  
 թագաւորահայրն շեթում երկար բա-

նիւք բոլորազրութեամբ հանգամանացն  
 փոփոխմանց արարողութեանց և ծիսից,  
 աղաչէր զնա ձեռնառու լինել յայն ի կա-  
 տարումն, և Դոդով առնել եպիսկոպո-  
 սաց և վարդապետաց, և զզուշաւոր քըն-  
 նութեամբ տեսեալ զիրսն, զոր արժանն  
 է ընդունել և համաձայնել այլոց եկե-  
 ղեցեաց. զի առանց խորհրդոյ և կամաց  
 նորա ոչ իշխէր առնել ինչ՝ թէև ի կողմն  
 իւր ունէր զարքայն Աւոն, մանաւանդ  
 զի՝ և չէր իսկ հաճեալ թագաւորահայրն  
 ընդ կամս նորա և պատուէր ևս յղեալ  
 էր առ Աթուղիկոսն՝ վարել զզուշու-  
 թեամբ, զի մի՛ խառնութիւն ինչ ծա-  
 դեցի յազգին յայնպիսու՛մ դառնու-  
 թեան ժամանակի:

Այսպէս յայտարարեալ Աթուղիկո-  
 սին առ շեթում զխորհուրդ սրաի իւրոյ  
 ի վերայ ծիսիցն փոփոխմանց, չե առեալ  
 պատասխանի ի նմանէ՛ շարագրէր ինքնին  
 զնամակ դաւանութեան՝ եղեալ ի նմա  
 զոր միանգամ հաստատել ըղձայր Դոդո-  
 վով, զոյր և օրինակ մատուցեալ առ ար-  
 քայ Աւոն՝ ծանուցանէր նմա ևս, թէ  
 զրեալ է զայնմ ամենայնէ առ թագաւո-  
 րահայրն շեթում՝ ինդրեալ զհաճու-  
 թիւն նորա: Այլ մինչդեռ յայսմիկ խոր-  
 հրդեան կայր և ահեռունէր տանել ի զլուխ  
 զայսպիսի իրողութիւն հաւատոյ և մու-  
 ծանել յԱրեւելեցի շայստանեայց զղա-  
 ւանութիւն այլոց ազգաց՝ ի հաճութեանէն  
 շեթմոյ և թագաւորին, հասանի նմա  
 մահ կենաց յիս կարոյ իւրոյ զամս տասն  
 և երեք կամ տասն և չորս (1305):

Իսկ թէ ի՞նչ ի՞նչ էին փոփոխութիւնք  
 մտադրեալք ի նմանէ՛ մուծանել յեկեղեցիս  
 մեր՝ այն ամենայն եղեալ են յերրորդ

Ճողովն Ասոյ և Ատանայ, ըստ որում վերաբերի ի կարգս Ճողովոցն:

Այն Գրիգոր Անաւարդեցի արար գործ վաստակոց զքանի մի ճառս և զերգս բազումս և Շարականս ի խնդրոյ արքային Հեթմոյ և եղբոր նորա Աստանգեայ՝ և եղբորորդւոյ նորա Աւանի՝ յանուն նոցա և իւր զսկզբնատառսն յօրինելով. բայց զի էին ամենայն յոճ՝ անպիտան՝ չեղեն ընդունելի ի գործածութիւնս Արար առանձին և Շարականս Մեծացուցելից ըստ պատշաճ ի Խօնի ի բաքանչիւր սրբոց, և սա զառաջինն եմոյճ սովորութիւն զամենայն աւուրս ասել զՄեծացուցէս, զի յառաջ քան զայն յաւուրս տէրունական տօնից և Աստուածածնի միայն ասէին. այլ ազգն զսովորութիւնն միայն ընկալիալ՝ զՇարականս Մեծացուցելից ի գործ եղ զնախնեացն՝ վասն տէրունական տօնից: Սմա տեղեակ գորով լի գուրի Յունաց և Ասորւոց, թարգմանեալ ինչ ինչ ի նոցանէ, յաւել ի Յայսմաւուրն՝ կարգելով զայն ըստ աւուրց ամսոյ: Աւ վասն փոփոխութեան տօնից՝ արար զնոր Տօնացոյց ըստ ամսոյ, այլ պահէր առ իւր առանձին՝ սպասելով ժամանակի:

Աս ջանացաւ յարմարել զճէսս Հայոց ընդ Ատանացոցն և Յունաց, որոց զըլխաւորք էին ինն, վասն որոյ Ճողովն եղև յետ վաղճանին նորա. և են այսոքիկ. 1, խառնել զՉուր ի բաժակն, և յաւելուլ ինչ ինչ ի սպասս Պատարագի. 2, բառնալ զԽաչեցարն ի սրբասացութենէ. 3, զամենայն տօնս ասնել ըստ ամսաթուոյ. 4, պահել զպահս Տակմանց ըստ Ատանացոց, և զայլ քանի մի պահս. 5, փոխել զքանս Մաշտոցաց՝ ի կանոնս մլրդ-

տութեան, զրոշմի, ձեանադրութեանց և այլոց օրհնութեանց. 6, միայն ի չորս եղանակս տարւոյն ասնել ձեանադրութիւն ըստ Ատանացոց. 7, փոխել ինչ ինչ ի ժամերգութիւնս առաւօտու և երեկոյի, և յաւելուլ ի նոսին զպէսպիս կցորդս յայլոց ազգաց. 8, ի կիր առնուլ զիւղ երեխայից, և 9, կատարել զվերջն օծումն Տիւանդաց: Բայց յայտմ ամենայն և ոչ զմին ընկալաւ Ակեղեցին Հայոց ոչ ի Արիւիկիա և ոչ յայլ տեղիս, միայն զվերջն օծումն՝ սմանք և եթ, որ և այժմ դադարեալ:

Չինչ ինչ ի ծիսից աստի ինքնին ի գործ եղ ըստ իւրում վկայութեան, բայց յոյժ ծածուկ, զի մի՛ անկցի յԱթոռոյն, որպէս ջուր խառնել ի բաժակն, և զայս ըստ կարեաց:

(Ի յոսոջնոյս)

ԱՅՆԷ ԱՐՔԵՂՈՍԿՈՍՈՍ

ՀԱՅՏԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵԼԵՑԻՈՅ ԱՆՑԵԱԼՆ.

(Շ-ր-ն-ի-թ-ի-ն)

Կոստանդին Բ. Հայրապետ Կատուկեցի՝ նայելով ի ժամանակին պապականութեան խլրամանց դէմ՝ անհրաժեշտ եղած պահանջմանց՝ ըստ բաղձանացողջամիտ պաշտօնէից Եկեղեցւոյ եւ Ազգի՝ պաշտպանողական գովելի մի գիրք կրօնէ, սակայն (Հեթում թաղաւորի) պետական բռնութեան չկարողանալով ցվերջն դիմագրել եւ պապականութեան (կամ Հռովմէականութեան) որդւով տոգորուած անձանց մեքենայու-